Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Ф-75

891.99
Հ-75
Ամ.
6 NOV 2011

ԱՒ. ԻՄԱՀԱԿԵԱՆ.

ՀԻՆ-ՆՈՐ
ԵՐԳ ՈՒ ՎԷՐՔԵՐԻՑ.

(Բանաստեղծութիւններ)

1748

ԲԱԿՈՒ
Տպարան Ն. Յ. Երեվանցեանի.
1902

29 APR 2013
32999

Дозволено ценз. Тифлисъ, 24 Іюня 1902 г.



Բազուի Հայոց
Հոգեւորական Դպրոց
Եկեղ.-Ժխակ. (Օրիորդաց)

I.

Սիրուն աղջիկ, երկիր լինիմ,
Դուն ինչ կլինիս.
— Սիրուն տղայ, գարուն կլինիմ,
Որ քեզ զուրեմ։
— Նշխուն աղջիկ, ծովակ լինիմ,
Դուն ի՞նչ կլինիս.
— Նշխուն տղայ, արօս կլինիմ,
Ծոցդդ լող տամ։
— Անուշ աղջիկ, երկինք լինիմ,
Դուն ի՞նչ կլինիս,
— Անուշ տղայ, աստղիկ կլինիմ,
Սրտումդ շող տամ։

II.

ՄԱՅՐԻԿԻՍ։

Հայրենիքէս հեռացեր եմ,
Խեղճ պանդուխտ եմ—տուն չունիմ.
Ազիզ մօրէս բաժանուեր եմ,
Տխուր—տրտում—քոյն չունիմ։

Սարէն կուգաք, նշխուն հաւքե՛ր,
Ա՜խ, իմ մօրս տեսեր չէ՞ք.
Ծովէն կուգաք, մարմանդ հովե՛ր,
Ախը՛ր, բարև բերեր չէ՞ք։

Հաւք ու հովեր եկան կըշտիս,
Անձէն դիպան ու անցան.
Պալակ—սրտիս, փափագ—սրտիս
Անխօս դիպան ու անցան։

Ա՜խ, քու տեսքին, անուշ լեղուին
Կարօտցեր եմ, մայրիկ ջան,
Երնէ՞կ, երնէ՞կ, երազ լինիմ,
Թռնեմ մօտդ, մայրիկ ջան.

Երբ քունդ գայ, լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,
Սրտիդ կըսնիմ վառ—կարօտով,
Լամ ու խնդամ, մայրիկ ջան . . .

III։

Ա՜խ, ալ-վարդի, սիրոյ վարդի
Հոր-փշերը մնացին . . .
Էն փշերը մատաղ սիրտս
Քրքրեցին ու կերան.
Կարմիր-կանանչ իմ օրերը
Սիրոյ սգով սևացան . . .
Ա՜խ, ափսոս իմ գարուն-կեանքիս
Սուր-փշերը մնացին . . .

IV.

Դարշ-ամպերն երկինքն առան,
Լուսնակն աղօտ կը շողայ.
Լռիկ ճահճում հարհանդ-մարմանդ
Նուրբ եղեգնը կը դողայ։

Արագիլը, մենակ ու լուռ,
Եղեգնի մօտ կը քայլէ,
Կը մտորէ խոր ու տխուր,—
Ճահիճն նուազ կը փայլէ։

Մռայլ-ափին մենակ նստած
Սիրտս անուշ կը թախծի.
Ու անուրջում միտքս թաղուած
Քունն աչերիս կը հանդչի . . .

V.

Պարզկայ գիշե՞ր ...
Աստղերն երկնքում լուռ պսպղում են.
Լուսնի շողերը դիպել են սարի
Ձիւնոտ կողերին,—կողերը ցոլում
Գէջին են տալիս։
Ցրտաշունչ քամին
Թեւերը փռած վնչում է, թռչում,
Սառած երկիրը ճաքում-ճաքճքում,
Ձեան հատիկներով քարափի կուրծքը
Ծեծում ու ծեծկում . .
Անծայր ճանապարհ . . .
Առաջ եմ գնում—ո՞ւր,—ես չ'գիտեմ.
Սառոյց ու ձմեռ,
Առաջ եմ գնում անյոյս, անընկեր,
Քամի ու գիշեր.
— Ա՜խ, եղէ յանկարծ յոյսս շողշողար,—
Նա ինձ ողջունէր . . .

VI.

Եղ չը տեսնել՝ուխտեր էի,
Բայց ա՜խ, էլի հանդիպայ.
Քուրմիկ, վերքս լաւ է հիմի,
Մի սև-սպի տեղը կայ։

Էն սև-սպին մութ ամպի պէս
Սեղուց դէմքը արևի.
Ու ման կուգամ սև շուքի պէս
Սարեր, ձորեր ամայի . . .

VII.

Իրեցի,—հարբս սարան,
Եարայ տուին ու տարան,
—Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Պոկեցին սիրտս ու տարան։

Ցաւքս խորն է, ճար չը կայ.
Ճար կայ, ա՜խ, ճարող չը կայ.
— Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սրտացաւ ընկեր չը կայ . . .

Լաւ օրերը գնացին,
Ափսո՜ս ասին, գնացին,
— Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սև-զարդերը մնացին . . .

VIII.

Ու ամպերէն, ամպի սրտէն
Արտասուքի պէս թօն կուգայ. —
Ա՜խ, ո՞ւր կ'երթայ իմ սև ճամփէն
Ա՜յ բախտ, եարաբ վերջ չը կա՞յ...

Եարաբ դարդլու, չոր-գլուխս
Ո՞ւրտեղ պիտի քուն մտնի. —
Սիրած, կարօտ սրտի վրա՞յ,
Թէ՞ չօլի մէջ ամայի...

Ա՜խ աչերս ո՞վ պիտ' ծածկէ, —
Աղիզ մէրս համբուրո՞վ,
Թէ՞ ձունն ու հող քամին բերէ
Սև-սհակի վույ-վույով...

IX.

Մայրի՛կ, հիւանդ եմ, սիրտս քրքրուած,
Տե՛ս, ո՞րքան խորն են հոգուս վէրքերը —
Արնոտ ու խոցոտ.
Մի՞թէ կարող ես վէրքերս բուժել,
Որ մեծ տիեզերքի հսկայ վէրքերի
Կաթիլներիցն են...
Մայրի՛կ, հիւանդ եմ երկնքի ցաւով.
Տե՛ս, ինչպէս դառն երգումեմ երգեր՝
Անհուն վշտերի, տանջուած մարդերի.

Մի՞թէ կարող ես երգերս մարել,
Որ մեծ տիեզերքի հսկայ վէրքերի
Ցաւն ու կսկիծն է...
Ա՜խ, թո՛ղ, մայրիկ իմ, վէրքերս վառուին,
Թո՛ղ ես մրմնջամ, անոյշս մորմոքիմ.
Ա՜խ, դու չես կարող խեղճ որդուդ կեանք տալ
Ավսա՜ս, չես կարող արևի ցոյը,
Աստղերի շողքը, կայծակի թափը
Հոգուս մէջ ձգել—կեանք տալ իմ կեանքին.
Երբէ՛ք չես կարող ջնջել ու փշրել
Երկինք ու երկիր—իմ մեծ վէրքերը՝
Արնոտ ու խոցոտ...
Մայրի՛կ, իմ մայրի՛կ,
Թո՛ղ ես թափառեմ երկրի ոլորտում,
Ամբոխի վրայ, ուրուականի պէս.
Ճակտիս կնճիռներ, վշտի սև ամպեր,
Աչերումս՝ արցունք, ձանձրոյթը՝ շրթնիս,
Մէնակ ու մռայլ թափառեմ խոժոռ,
Որպէս զի միտքս էլ անվերջ թափառէ
Մինչև տիեզերքի հեռու եզերքը...
Ա՜խ հեռո՛ւ եզերք, որ չ'կա՞յ... չ' կա՞յ...
Թո՛ղ միայն այնտեղ— աստղերի ցանցում,
Լսեմ լուսթեան խոր, լայն երգերը.
Եւ ես մտատանջ, հպարտ ու մէնակ
Արտասուիմ լռիկ ու յաւէրժ խորհեմ,
Ու յաւէրժ խոկամ.
— ... Մայրի՛կ, հիւանդ եմ...

X.

ՆՈՒԷՐ ՕՐ. Զ. Մ —ԻՆ.

ապիկ էի նորաբողբոջ
Սարի լանջում,—երկնի տակ.
Ինձ դիւթում էր առուի խոխոջ,
Ինձ ողջունում արեգակ.

Գիշերները աստղ ու լուսին
Քնից կտրած ու ապուշ՝
Ծաղկիս սիրուց երգում էին
Օրօր անդրը ու անուշ...

Գառների հետ լուսադէմին
Եկար սարը, ջան աղջիկ.
Ինձ քաղեցիր, դրիր անգին
Կրծքիդ վրայ գեղեցիկ..:

Այնտեղ, այնտեղ ես ապրեցայ
Քու արցունքով բիւրեղիկ:
Բախտը ժպտաց քեզ, սևաչեայ,
Ես չորացայ... ա՜խ, աղջիկ...

XI.

ահկալ ես, բեղարած ես,
Առը շուռ տուր, չուտ արի,
Ծովի պէս քրտնած ես, —
Եղներն արձկի՛, տուն արի:

Կաթի սերը քաշեր եմ,
Դրեր եմ հովին՝ սառի.
Ալ-զոգնոցս փռեր եմ.
Արի, թառլան, թ՜ըռռ արի:

Տեղ եմ բցեր շուաքում,
Քամին կուգայ զով կանի.
Լուսնի շողն է մեր ծոցում,
Զափ տուր, չափ ա՛ռ--չուտ արի:

Դատրած, բեղարած եմ ջան,
Ամպերն եկան—դէ՛հ, արի,
Բեղարած ջանիդ զուրպան,
Ծոից թև ա՛ռ, թէզ արի...

XII.

Օխթը տարով հեռու քեզնէն
Քու շուաքով եմ ապրում.
Օխթը տարով բաժան քեզնէն
Քու կարօտով եմ էրում...
Դարդիս դարման, եարիս մահլամ
Ջան ու ջիգեար եարս ուր ա...

Գիշեր-ցերեկ զրկուած քնէն
Ծով է կորում աչքերս,
Բալի զարիք մի ճամբորդէ մ՝
Խաբար առնում իմ եարէս։
Դարդիս դարման, եարիս մահլամ
Թաղ ու պսակ եարս ուր ա...

Օխթը տարի ծում ու պասով
Օր ու արևը սևցուցի,
Բալի Մշու-Սուլթան զօրքով
Իմ մուրազը տար ինձի...
Դարդիս դարման, եարիս մահլամ
Թև ու թիկունք եարս ուր ա...

XIII.

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալան-ալան ծաղիկներ.
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով-հովեր...
Երկինք-գետինք գլխուս մթնան,
Անտուն-անտէր կուլամ ես.
Եարիս տարան, ջանիս տարան,
Հոնգուր-հոնգուր կուլամ ես...
Ամ՝ խ. եարս ինձի հանեց սրտէն,
Անճար թողեց ու գնաց.
Սրտիս սաւդէն— խորունկ եարէն
Անդեղ թողեց ու գնաց...
Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալան-ալան ծաղիկներ.
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Անպշող երկնուց զով-հովեր...

XIV.

Զովերն առան սար ու դաշտեր,
Ամպերն եկան,— մութն ընկաւ.
— Անգին մէրիկ, հերիք յուսաս,
Քու շողշողուն աստղն ընկաւ։
Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,
Վէրքը սրտիս տուն չեմ գայ...

Կաթիլ-կաթիլ ամպն է ցողում
Սև ու պղտոր երկնքէն.
Մաղիկ-մաղիկ վերքս է ծորում
Իմ անդիման, սև սրտէն.
Լա՛ց, մերիկ ջան, որ էլ չեմ դայ,
Վերքս խորն է, ճար չը կայ...

Անգութ կեանքում վերք ստացայ
Սրտանց սիրած ընկերէս.
Անխիղճ կեանքում վերք ստացայ
Անուշ սիրած քուրիկէս...
Լա՛ց, մերիկ ջան, որ էլ չեմ դայ,
Աղիզ բալեդ էլ չը կայ...

XV.

Սև-աչերէն շատ վախեցիր, —
Էն մութ, անծէր գիշեր է.
Մութն ահ է, չարքեր շատ կան, —
Սև-աչերը մի՛ սիրէ...

Տես իմ սիրտս,—արուն-ծով է,
Էս չարքերը զարկեցին.
Էն օրուանէն դադար չունիմ. —
Սև-աչերը մի՛ սիրէ...

XVI.

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԱՆԳԸ.

«Նախ քան հոգին կը զանի կարելիութիւն ըմբռնելու, նա պիտի միանայ անխօս բարբառի հետ, — և այն ժամանակ ներքին լսելիքի համար կը խօսէ լռութեան ձայնը»:

Բուդդհա:

«Երբեմն անապատում ծագումեն ձայներ,
բայց ոչ ոք չգիտէ, որտեղից են նրանք»:

Մի բեդուինի խօսքեր.

Եւ ես ապատում, և անապատում
Հոգիս ծանրացած լռւռ թափառում եմ.
Եւ ես զգում եմ, ահա տեսնում եմ
Ողջ տիեզերքը մի մեծ, անհուն զանգ,
Եւ հոգիս նրա լեզուակը վսեմ...

Եւ հրաշքներով, վեհ լռութեան մէջ
Տիեզերքն անչափ՝ խոր զողանջում է
Երկի անհունութեան և յաւէրժութեան.
Եւ տիեզերքը խոր զողանջում է,
Բայց իմ հոգումն է, իմ Ոգին է այն,
Որ զողանջում է — ես մարգարէ եմ...

Եւ ահա այնտեղ ամբոխն է ծփում
Ծանր ու թանձր ովկիանոսի պէս.
Եւ դորշ, հալթ է այն — մի հսկայ զանգուած:

Եւ հոգուս խորքից բարբառ եմ լսում —
Զօրանջը զանգի տիեզերական.
Եւ դէպի ամբոխն իջնում եմ ահա
Նոր կտակներով, նոր պատգամներով.
Դէպ՝ նրա հոգին զահավիժում եմ
Նրան խայթելու, եւ քարոզելու,
Ե՛ւ արտասուելու, եւ այրուելու...

XVII.

Լռիկ աստղերն հեզ հայեացքով
Անապատին են նայում. —
Եւ անապատն խոր թախիծով
Հոգուս մէջն է ծաւալւում:

Ես խորհում եմ լուութեան մէջ, —
Խորհրդաւոր ու անձայն:
Եւ այն աստղերն վէրքերի պէս
Հոգուս խորքում կը տրրպան...

8741
1001

XVIII.

Գրեն իջաւ սարի գլխուն,
Դար ու դաշտում լուս չը կայ.
Հաւք ու թռչունք մտան խոր քուն, —
Ա՜խ, ինձ համար քուն չը կայ:

Լուսնակն ընկաւ երթըկից նեռ,
Կշեռքն եկաւ երկնքում,
Ջով հովերն էլ մըթնշողէս
Աստղերի հետ են զրցում:

— Սիրուն աստղե՛ր, անուշ հովե՛ր,
Եարրս ո՞ւր ա՛ էս գիշեր.
Պարզ երկնքի նշխուն աչե՛ր,
Եարիս տեսա՞ք էս գիշեր...

Լուսը բացուաւ, դուռը բացուաւ,
Ամպ ու զամպ է, —թոն կուգայ.
Ալ-ձին եկաւ, անտէր եկաւ,
Ա՜խ եարս ո՞ւր ա՛, տուն չի գայ...

XIX.

ԱՐԱՋԻՆ.

Եր սարերէն, մութ ձորերէն
Պղտոր-պղտոր կուգաս, Արաղ.
Մեր սրտերէն, խոր աչքերէն
Արուն քամեր, կերթաս, Արաղ...
Մեր սարերէն, սև ձորերէն
Ոլոր-մոլոր կուգաս, Արաղ.
Ա՜յ սարե՛ր, ջան սարե՛ր,
Ալմաստի սարե՛ր...
Քանի հարուր-հարուր տարի
Մեր սրտերէն եկե՛ր, կ'երթաս.
Մեր դարդերով, մեծ ցաւերով
Խոլոր-մոլոր կերթաս, Արաղ...
Մեր սարերէն, մութ ձորերէն
Մեր ցաւերով կերթաս, Արաղ.
Ա՛յ սարեր, Հայ սարե՛ր,
Ջան անո՛ւշ սարե՛ր...
Ու դարերով, մեր դարդերով
Էս աշխարհի քար-ապառաժ,
Անգութ խղճին մեջտ դարնելով
Տխուր-տրտում կերթաս, Արաղ...
Մեր սարերէն, խոր ձորերէն
Արուն քամեր, կերթաս, Արաղ.

Ա՛յ, սարե՛ր, ջան ձորե՛ր,
Ջաւահիր սարե՛ր...

Ա՜խ, աշխարհը անխղճմտանք,
Քեզ չի դթայ, աղիզ-Արաղ,
Քու բողոքին, քու մորմոքին
Չի էլ լսի, արնոտ Արաղ..,
Մեր սարերէն, մութ ձորերէն
Տխուր-տրտում կերթաս, Արաղ,
Ա՛յ սարե՛ր, հայ ձորեր
Ջմրուխտի սարե՛ր...

Դուն էլ, Արաղ, մեր արունով
Էս աշխարհի խղճի վրայ
Դիզուիր, դարձիր սև-դառն ծով. —
Թոյն ու արուն, աղիզ-Արաղ.
Մեր սարերէն, մեր սրտերէն
Արունքամեր, կերթաս, Արաղ.
Ա՜յ սարե՛ր, Հայ-սարե՛ր,
Ջան անուշ սարե՛ր,
Ալմաստի սարե՛ր...

XX.

ԻՄ ՓԷՐԻՆ.

Էս—գիշերին գետի ափին
Ես նստած եմ սիրավառ.
Գետն հոսում է — և հոսանքին
Ես նայում եմ միալար։
— Ո՞վ է խաղաղ մէջ-գիշերին
Քնած գետը վրդովում.
Ալիքները խփում ժայռին, —
Ծերուկ ժայռը լուանում։
— Ո՞վ է աստղոտ, զով գիշերին
Լուսնի շողով զարդարում.
Ջուշան-կրծքին, սև մազերին
Գոհար ցողեր սրսկում։
— Ո՞վ է չքնաղ բարի-լուսին
Ծաղիկները համբուրում.
Մշուշային փրփուրի՛ մէջ
Արշալոյսին ողջունում։
— Նա հեզ գետի լուռ փէրին է,
Ցնորքներիս սիրելին.
— Նա իմ սրտի դիցուհին է,
Վառ երգերիս նաղելին...
Եւ մինչև լոյս գետի ափին
Ես նստած եմ քարացած.
Գետն հոսում է, — և հոսանքին
Ես նայումեմ շուարած...

XXI.

ութը գրկած գետ ու գետին,
Հով ու ալիք կը ծփան.
Երկինք գրկած աստղ ու լուսին,
Լուռ կը ննջէ Ախուրեան։
— Սիրտս, սիրտս, թոյլ կը դարկէ,
Սէր ու երգեր էլ չը կան.
Նոր էր ծլեր, — արև սիրեց,
Արև-աչեր էլ չը կան։
Վառ աստղերը երկնուց ընկան,
Վարդ ու շուշան թառամեց.
Ա՜խ, իմ կեանքս, անո՛ւշ կեանքս
Կտոր-կտոր փշրուեց...
Հովն ու ալիք կուգան-կերթան,
Ցաւած սիրտս կը շոյեն.
Ու իմ սիրուս մրմունջներէն
Տխուր երգեր կը հիւսեն...

XII.

ԱԼԱԳԵԱԶԻՆ.

Ի-մութ ամպեր ճակտիդ դիզուան,
Դուման հագար, Ալագեազ.
Սրտումս արև հէչ չի ծագիլում,
Սիրտս էլ դուման, Ալագեազ...

Զառ փէշերդ անցայ, տեսայ՝
Առանց դարդի սիրտ չը կայ,
Է՜խ, իմ դարդը, ջան Ալագեազ,
Իմ դարդիս պէս հէչ չը կայ...

— Է՜յ, Մանտաշի նշխուն հաւքե՛ր,
Իմ դարդս որ ձերն եղնէր,
Ձեր էդ զառ-վառ խաս փէտուրներ
Կը սենային, քանց գիշեր.

— Է՜յ, Մանտաշի մարմանդ հովե՛ր,
Իմ դարդս որ ձերն եղնէր,
Ձեր նուշ-անուշ ծաղկանց հոտը
Թոյն ու տօթի կը փոխուէր...

Է՜յ վախ, կոտրան իմ թեւերս,
Ընկայ գիրկդ, Ալագեազ,
Ա՜խ, մեծ սրտիդ սըղմեմ սիրտս, —
Լամ, արուն-լամ, Ալագեազ...

XXIII.

Է՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չը տեսանք.
Վա՜խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ'իմացանք։

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն
Աշխարհի ճախ սեղանից.
Մենք աշխարհի խորթ-տղերքն ենք,
Մեզ փայ չը կայ աշխարհից։

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ
Քարից-հողից հաց քամէ. —
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, վայելէ...

Խեղճ աղքատը դառը դատի —
Դադարկ նստի... Է՜յ, աշխարհ,
Էլ ինչու ես քարը թողնում
Քարի վրայ, քար-աշխարհ...

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չը տեսանք.
Վա՜խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ'իմացանք։

Գրադարան Դաշրոց

Ամեն անցաւ, եկաւ գարուն,
Հալաւ բանձրիկ սարերու ձուն.
Ճամբայ բացուաւ գարիքներուն։
Իմ գարիքէն խաբար չը կայ,
Սիրտս ճամբին դադար չը կայ։
Ղարիբ երկիր ամպ-մշուշ է,
Իմ գարիքի սիրտ քրքուշ է,
Ոտ կը փոխէ՝ քար ու փուշ է։
Հերիք մնաս, դարձի վաթան,
Իմ ախպէր ջան, ազիզ եար ջան.
Ջուրն է պրծեր կուգայ սարէն,
Սարէն, ձորէն, իմ աչքերէն...
Իրար մի տար սրտիս եարէն։
Դարձի վաթան, հոգն անուշ է,
Հոգն անուշ է, ջուրն անուշ է։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Մասնաշենք
ԵՐԵՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0333512

32.999